# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 746

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> 43 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով «ԱՐՓԻԽԱԶ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հողամասի հատակագիծը /չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023HR7VDZ/ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1596-Ն որոշումը՝

*որոշում եմ.*

1.Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող, 07-021-0220 կադաստրային ծածկագրից 0.1 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 28
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 745

### ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1144-Ն որոշումը

*որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականություն հանդիսացող 07-021-0041-0042 կադաստրային ծածկագրով 0.00640 հա հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում՝ համաձայն ներկայացված հողամասի հատակագծի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 28
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 744

## ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1144-Ն որոշումը

*որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականություն հանդիսացող 07-021-0039-0029 կադաստրային ծածկագրով 0.00428 հա հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում՝ համաձայն ներկայացված հողամասի հատակագծի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2023թ. հուլիսի 28
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 743

### Ֆ/Ա ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԲԱՑՕԹՅԱ ԱՌԵՎՏՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 45 հոդվածի 1-ինմասի 3-րդ կետով հիմք ընդունելով Ֆ/Ա Լուսինե Սահակյանի հայտը անդորրագիր N 5265 ***որոշում եմ՝***

Կոտայքի մարզի Գառնի համայնքի գյուղ Գառնի /Գառնի Ձոր/ փողոցում գործող Ֆ/Ա Լուսինե Սահակյանին տալ թույլտվություն 2023 թվականի մայիսի 01-ից մինչև սույն թվականի օգոստոսի 31-ը բացօթյա առևտրի վաճառքի վերաբերյալ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2023 թ. Հուլիսի 27
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 742

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի՝

*որոշում եմ.*

1.Գառնի համայնքի Գողթ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Համլետ Սանդոյանին պատկանող 07-026-0029-0001 և 07-026-0029-0031 կադաստրային ծածկագերով հողամասերի միավորումից առաջացած հողամասին տրամադրել հասցե՝ Գառնի համայնք գյուղ Գողթ 3-րդ փողոց թիվ 6/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 27
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 741

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> 43 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով ''Աշոտ Հակոբյան Գուրգենի'' ԱՁ-ի կողմից ներկայացված հողամասի հատակագիծը /չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023QWBB4A/ և Գողթ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 27-ի ''Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնքի /բնակավայրի/ պարզեցված Գլխավոր հատակագիծը հաստատելու մասին'' N 15-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1.Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գողթ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Ջեննի Պարգևի Ֆիլյանին պատկանող, 07-026-0001-0046 կադաստրային ծածկագրով 0.15000 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

2023 թ. հուլիս 27
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 740

### ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային Համակարգի Մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով ***որոշում եմ***՝

Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2023թ. բյուջեի նախահաշվում կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

20 23թ. Հուլիս27
գ.Գառնի

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27- Ի
N 740 ՈՐՈՇՄԱՆ

1. 01.1.1. նախահաշվի 5113 հոդվածի 3-րդ եռամսյակից 186.0 հազ ՀՀ դրամ տեղափոխել 08.2.7. նախահաշվի 5129 հոդվածի 3-րդ եռամսյակ:
2. 01.3.3. նախահաշվի 4241 հոդվածի 3-րդ եռամսյակից 700.0 հազ ՀՀ դրամ տեղափոխել 08.1.1. նախահաշվի 4251 հոդվածի 3-րդ եռամսյակ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 739

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին հաստատված կարգի 10,11,22 կետերի, կադաստրի կոմիտեի հաշվառված լինելու վերաբերյալ 2023W9YKUY ծածկագրով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աղվան Արշակի Ջոզանյանին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գեղադիր գյուղում գտնվող, 07-022-0031-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ***

1. Աղվան Արշակի Ջոզանյանին սեփականության իրավունքով պատկանող 07-022-0031-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.352566 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 281.5 քմ մակերեսով բնակելի տունը, 5.0 քմ մակերեսով աստիճանահարթակը, 160.1 քմ մակերեսով անասնագոմը, 212.4 ծածկերը, 17.13 օժանդակ շինությունը, 9.52 քմ մակերեսով օժանդակ շինությունը, 160.1 մակերեսով օժանդակ շինությունը, 5.84 քմ մակերեսով ծածկը և 12.4 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ շինությունների օրինականացման համար վճար չգանձել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 27
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, --, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 738

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, որոշում եմ՝

1.Ալինա Աղաջանյանին տալ շինարարության թույլտվություն՝ Գառնի համայնքի Գառնի գյուղի 07-021-0059-0021 ծածկագրով 1-ի թաղամաս 3-րդ փողոց 12 հասցեյում Ալինա Աղաջանյանին պատկանող տարածքում՝ բնակելի տան,քարե պարիսպի կառուցման համար:

2.Պարտավորեցնել Ալինա Աղաջանյանին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ,տեղեկացնել համայնքի ղեկավարին,համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալինա Աղաջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

2023 թ. հուլիս 27
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 737

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Նորոշմամբ հաստատված կարգի պահանջներով որոշում եմ՝

1.Վրեժ Ղազարյան-ին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ Գառնի համայնքի Գառնի գյուղի 4-րդ թաղամաս 2-րդ փողոց 35 հասցեյում՝ բնակելի տան, նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վիրապ Կարապետյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վրեժ Ղազարյան-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

2023 թ. հուլիս 27
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 736

## ՀԱՅԿ ՏՈՆՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54[2] հոդվածի պահանջները և հաշվի առնելով այն հանգամանքը որ քաղաքացի Հայկ Տոնոյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Գառնի համայնքի Գողթ գյուղում գտնվող հողամասում ինքնակամ իրականացրել է հողահարթեցման և քարամաքրման աշխատանքներ՝ խախտելով հողի բերրի շերտի օգտագործման կարգը,

որոշում եմ.

1.Քաղաքացի Հայկ Տոնոյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:
2.Պարտավորեցնել Հայկ Տոնոյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Գառնի համայնքի բյուջեի N 900105207105 հաշվեհամարին:
3.Պարտավորեցնել Հայկ Տոնոյանին դադարեցնել հողահարթեցման և հողաքանդման աշխատանքները՝ մինչև համապատասխան թույլտվություն ստանալը:
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գառնի համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ սույն որոշման 2-րդ կետով՝ կամավոր կատարման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո՝ որոշման կայացման օրվանից երեք ամսվա ընթացքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Տոնոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 25
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 735

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Արտակ Ջիգունի Գալստյանին պատկանող 07-021-0311-0182 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Գառնի համայնք, գյուղ Գառնի, Գառնի բանավան այգեգործական թաղամաս թիվ 2 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

2023 թ. հուլիսի 26
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 734

### ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> 43 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջները՝ ***որոշում եմ***.

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող, Արման Լիպարիտի Թորոսյանի սեփականություն հանդիսացող 07-021-0060-0034 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.02636 հա մակերեսով հողամասի և 07-021-0060-0034-001 կադաստրային ծածկագրով 16.2 քմ մակերեսով օժանդակ շինության գործառնական նշանակությունը համարել փոփոխված բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

2023 թ. հուլիսի 26
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 733

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի՝ որոշում եմ.

1.Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Գեղամ Մանուկի Սարդարյանին պատկանող 07-021-0055-0002 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ համաձայն բաժանման սխեմայի.

1) Առանձնացվող հատված 0.19612 հա՝ Գառնի համայնք, գյուղ Գառնի 1-ին թաղամասի 6-րդ փողոց թիվ 1 ,

2) Առանձնացվող հատված 0.1000 հա՝ Գառնի համայնք, գյուղ Գառնի 1-ին թաղամասի 6-րդ փողոց թիվ 1/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2023 թ. հուլիս 25
գ.Գառնի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«24» ՀՈՒԼԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 732

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 2-ին կետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ ***որոշում եմ՝***

1. Արամ, Ալվարդ, Բելլա, Նաիրա և Գևորգ Սարգսյաններին կողմից փաստացի օգտագործվող 0.33537 հա սեփական տնամերձ հողամասի ծածկագիր 07-021-0026-0007 սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Տ.Պողոսյան**

2023թ. հուլիսի 24
գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«24» ՀՈՒԼԻՍԻ 2023ԹՎԱԿԱՆԻ N 731

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳԱՌՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով, նույն որոշմամբ 11-րդ կետի ,, Զ ,, ենթակետի վերաբերյալ տվյալով ինչն է 2023UAYAJE և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամ, Ալվարդ, Բելլա, Նաիրա և Գևորգ Սարգսյաններին համասեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Գառնի համայնքի գյուղ Գառնի Խ. Աբովյան փողոց 2-րդ փակուղի թիվ 1 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ՝***

1. Արամ, Ալվարդ, Բելլա, Նաիրա և Գևորգ Սարգսյաններին համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 1975թվականին կառուցված 291.48քմ շինությունները համարել օրինական:

Համայնքի ղեկավար՝ **Տ.Պողոսյան**

2023թ. հուլիսի 24
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 730

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> 43 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 12-ի N 498 որոշման 2-րդ կետի ա/ ենթակետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1/ ենթակետի և հիմք ընդունելով Գառնի համայնքի 2023 թվականի ապրիլի 25-ի N 53-Ա որոշումը՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի Հացավան բնակավայրում գտնվող, սեփականության իրավունքով Նելլիկ Աղասու Միքայելյանին պատկանող, 07-041-0108-0012 կադաստրային ծածկագրով 4.1314 հա գյուղատնտեսական այլ հողատեսք, վարելահողից 150 քմ հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2023թ. հուլիսի 24
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 729

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10,11, 22 կետերի, կադաստրի կոմիտեի հաշվառված լինելու վերաբերյալ 2023BDBVRF ծածկագրով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գագիկ Մուրադյանին և Օֆելյա Գրիգորյանին համասեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող, 07-021-0059-0022 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ որոշում եմ.

1. Գագիկ Մուրադյանին և Օֆելյա Գրիգորյանին համասեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 268.92 քմ մակերեսով բնակելի տունը, 2.30 քմ մակերեսով օժանդակ շինությունը, 2.21 քմ սանհանգույցը, 1.51 քմ մակերեսով ջրավազանը, 0.26 քմ մակերեսով պարիսպը և 3.85 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական Գառնիի համայնքապետարանի 900105207212 հաշվին 460 100 /չորս հարյուր վաթսուն հազար հարյուր/ ՀՀ դրամ վճարելուց հետո:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 24
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գառնի, -, garnihamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 728

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, որոշում եմ՝

1.Անդրանիկ Բազիկյանին տալ շինարարության թույլտվություն՝ Գառնի համայնքի Գեղադիր գյուղի 07-022-0016-0002 ծածկագրով 1-ի փողոց 15 հասցեյում Անդրանիկ Բազիկյան-ին պատկանող տարածքում՝ բնակելի տան վերակառուցման համար:

2.Պարտավորեցնել Անդրանիկ Բազիկյանին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ,տեղեկացնել համայնքի ղեկավարին,համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անդրանիկ Բազիկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

2023 թ. հուլիս 24
գ.Գառնի